ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«27» մարտի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մարտի 27-ին նշվում է Թատրոնի համաշխարհային օրը:

Այս գեղեցիկ օրվա առթիվ շնորհավորում եմ թատերական գործիչներին և թատերասեր հասարակությանը:

Վերհիշելով Ստեփանավանի թատրոնի անցած ուղին և արձանագրած հաջողությունները, հանդիսատեսի սերն ու համակրանքը՝ հպարտությամբ պետք է հիշենք թատերական Ստեփանավանի տաղանդավոր դերասաններին և ռեժիսորներին՝ Սոս Սարգսյանին, Սերգեյ Խանբեկյանին, Ռոմիկ Պողոսյանին, Մուշեղ Հովակիմյանին, Մարուսյա Սարգսյանին, Էռնեստ Միքայելյանին և շատ այլ անվանի ստեփանավանցիների, որոնց անմնացորդ նվիրումը թատերարվեստին պետք է լավ օրինակ ծառայի Ստեփանավանի երբեմնի թատերական ավանդույթները վերականգնելու համար, որի ուղղությամբ այսօր համայնքում գործնական քայլեր են ձեռնարկվում:

Կրկին շնորհավորելով թատրոնի նվիրյալներին՝ մաղթում եմ ստեղծագործական նվաճումներ, հանդիսատեսով լեցուն դահլիճներ և բուռն ծափեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ